ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 849-Ա « 16 » փետրվարի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.27 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՀՐԱՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 39-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 60-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի 2026 թվականի հունվարի 29-ի N 606 արձանագրությունը՝

1.Սուսաննա Հրանտի Սարգսյանին՝ 2026 թվականի փետրվարի 16-ից նշանակել «Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան հ.27 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր մինչև 65 տարին լրանալը՝ 2026 թվականի փետրվարի 16-ից մինչև 2029 թվականի հունվարի 28-ը ներառյալ:

2. «Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան հ.27 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրեն Սուսաննա Սարգսյանին:

3. «Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան հ.27 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Լիլիյա Օհանյանին ազատել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

4. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ